

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (23-րդ տարի)

Այս թիւով.....

Ապրիլ ամսուան տօնացոյց	էջ 2
Յինանց օրեր	2
Ծաղկազարդ, Հետեւեցէ՛ք մեզի	3
Զատիկ՝ Ս. Յարութիւն	4
Ինչպէ՛ս ընտրել	5
Նոր Կիրակի . Կրկնազատիկ	6-7
Տէր Աստուած	7
Շարական Նոր Կիրակիին	8
Ս ր բ ու հ ի Ա ս տ ու ա ծ ա ծ ն ի աւետումը	9
Կարմիր Կիրակի	10
Կանաչ Կիրակի, Յիշատակ	
Ղազարոսի Յարութեան	11
Լ ուր եր եւ Ն կ ա ր ն եր	
Կիրակնօրեայէն	12-14
Աւագ Երկուշաբթի	15
Աւագ Երեքշաբթի	15
Տաք կոյսերուն առակը	16
Աւագ Չորեքշաբթի	17
Աւագ Հինգշաբթի	18
Աւագ Շաբաթ	18
Աւագ Ուրբաթ	19
Ո՞րն է ճիշդ պատասխանը	էջ 20-23
Ինչպէ՛ս ոգեկոչել Մեծ Եղեռնի նահատակներուն անմահ յիշատակը	20

Ապրիլ 2023 (Լ տարի թիւ 8)



Յ... Յարութիւն

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

**Քրիստոս Յարեալ ի Մեռելոց
Օրինեալ Է Յարութիւնն
Քրիստոսի**

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

www.sourphagop.org <https://www.facebook.com/sourphagop.org> https://www.instagram.com/sh_sundayschool/

Ապրիլ ամսուան բացատրական տոնացոյց

Շրթ. 1	Յիշատակ Ղազարոսի Յարութեան
Կիր. 2	Մեծ Պահքի Է. Կիրակի՝ ԾԱՂԿԱԶԱՐԴ
Բշ. 3	Աւագ Երկուշաբթի՝ յիշատակ Արարչագործութեան
Գշ. 4	Աւագ Երեքշաբթի՝ յիշատակ Տասը Կուսանաց
Դշ. 5	Աւագ Չորեքշաբթի՝ յիշատակ Մատնութեան
Եշ. 6	Աւագ Հինգշաբթի՝ յիշատակ ոտնլուայի եւ Վերջին Ընթրիք
Ուր. 7	Աւագ Ուրբաթ՝ Կարգ Խաչելութեան եւ Թաղման: Աւետուժն Սուրբ Աստուածածնի
Շրթ. 8	Աւագ Շաբաթ՝ Ճրագալոյց Սուրբ Զատիկի
Կիր. 9	ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ՝ Յիշատակ Քրիստոսի Յարութեան
Բշ. 10	Յիշատակ Մեռելոց
Շրթ. 15	Յիշատակ Ս. Յովհաննէս Մկրտիչի Գլխատման
Կիր. 16	Նոր Կիրակի (Կրկնագատիկ),
Կիր. 23	Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի
Բշ. 24	Յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակներուն:
Կիր. 30	Կարմիր Կիրակի

ՅԻՆԱՆՑ ՕՐԵՐ

Ինչպէս ունինք Զատիկէն առաջ 50 օրերու տրտմութեան եւ ապաշխարանքի շրջան մը, հաւատացեալը նախապատրաստելու համար եկեղեցական մեծագոյն այս տօնին, այնպէս ալ ունինք Զատիկէն յետոյ 50 օրերու հոգեւոր ուրախութեան շրջան մը, որ շարունակութիւնը եւ երկարաձգումն է Զատիկի խորհուրդին եւ վայելքին: Յարութեան տօնին յաջորդող այս օրերը ծանօթ են տօնացոյցի մէջ ՅԻՆՈՒՆՔ կամ ՅԻՆԱՆՑ ՕՐԵՐ անունով:

«Յինունք»-ի արմատը՝ կամ եզակին պէտք է ըլլայ ԻՆՆ բառը. եւ ենթադրութիւնը այն է, որ Յինունք կը նշանակէ այն 9 յաջորդական Կիրակիները, որոնք կը սկսին Զատիկով եւ կը վերջանան Յարութեան առաջին Կիրակիով, որ կը յաջորդէ Հոգեգալուստին: Յատկանշական երեւոյթը այն է, որ Սրբոց տօներ տեղի չեն ունենար Զատիկէն մինչեւ Յարութեան առաջին Կիրակին երկարող ժամանակամիջոցի ընթացքին:

Յինունքը կը գործածուի Զատիկէն Հոգեգալուստ երկարող 50 օրերու շրջանին համար: Անոր առաջին 40 օրերը, որոնք կը յանգին Համբարձման տօնին, ամբողջութեամբ նուիրուած են Քրիստոսի յարութեան փառաբանութեան. ուրիշ խօսքով քառասնօրեայ այս շրջանին ամէն մէկ օրը Կիրակի է, որոնց ընթացքին կ'երգուին Կիրակի օրերուն յատուկ շարականները (ի բացառեալ Կարմիր Կիրակիէն):

Յինունքի եօթը Կիրակիները կը կոչուին հետեւեալ անուններով. Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ, Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Երեսման Ս. Խաչ, Հինգշաբթի օրը Համբարձում, ապա Երկրորդ Ծաղկազարդ եւ Հոգեգալուստ:

Է. Կիրակի Ծաղկազարդ



ՅԻՍՈՒՄԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երբ Երուսաղեմի մօտեցան եւ հասան Բեթփագէ, Ձիթենեացիերան կողին, Յիսուսի հրամանով երկու աշակերտներ գացին աւանակը բերին եւ իրենց վերարկուները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց վերարկուները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր.-

«Օրհնութիւն Դաւիթի Որդիին, օրհնեալ է ան՝ որ կուգայ Տիրոջ անունով:

Օրհնութիւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղեմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդրեցաւ:

- Ո՛վ է ասիկա,- կը հարցնէին քաղաքի բնակիչները:

- Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլեայի Նազարէթ քաղաքէն:

Հետեւեցէ՛ք մեզի

<http://www.sourphagop.org/>

-  <https://www.facebook.com/sourphagop.org>

 https://www.instagram.com/sh_sundayschool/

 https://www.pinterest.ca/SH_SundaySchool/

Զատիկ Ս. Յարութիւն

ՅԻՍՈՒՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայրը՝ Մարիամը, եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան:

. - Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դուռը քարը, - կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր:

Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր, եւ սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, գիտեմ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՞ք, զինք հոս դրած էին: Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ինք ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա, հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս ըսած էր ձեզի:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած ու ապշահար, եւ ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:



Քրիստոս Յարեալ Ի Մեռելոց, Օրհնեալ Է Յարութիւնն Քրիստոսի

Ինչպե՞ս ընտրել

Մատթեոս 5:16

Յաճախ դժուարություն ունինք որոշելու թե ի՞նչ պիտի ընենք:

Ամբողջացո՛ւր այս խաղը եւ յիշէ գտած նախադասութիւնդ երբ գտնուիս դժուար որոշումի մը առջեւ:

Գծիկներուն վրայ գրէ երկու գիրերուն մէջտեղի գիրը:

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Ս Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ի Փ Ք

ՀՂ ԴԶ ՏՑ ԻԽ ՇՉ ՍՆ ՌՎ ԷԹ ԸԺ ՇՉ ՁՃ -Բ ՍՆ ՅՇ ՉԶ ՁԸ ՌՎ

ՆՈ ՇՉ ՁՃ -Բ ՍՆ ՃՅ -Բ ՏՑ ԳԵ ՇԶ ՐԻ -Բ ՁՍ ՊՌ ԴԶ ՑՓ ,

ՇՉ ՏՑ -Բ ՅՇ ՇԶ ՅՇ ՓՕ ՀՂ ԴԶ ՏՑ ԱԳ -Բ ՏՑ ԺԼ

ԲԴ ՇՉ ՏՑ ԽԿ ԴԶ ՏՑ ԷԹ ՎՐ ԴԶ ՌՎ ՅՇ ԴԶ ՅՇ ԴԶ ՑՓ

ԻՔ -Բ ՁՍ -Բ ՑՓ ՇՉ ՏՑ ԴԶ ՅՇ ՀՂ ԴԶ ՏՑ ԿԶ -Բ ՍՆ ՏՑ ԷԹ ,

ՇՉ ՏՑ ԴԶ ՏՑ ԾՀ ԺԼ ՅՇ ՓՕ ԺԼ ՃՅ ՁԸ ՊՌ ՁԸ



ՆՈՐ ԿԻՐԱԿԻ – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ

Արեւելեան Եկեղեցիներ Չատկին յաջորդող Կիրակիին կու տան ՆՈՐ մակդիրը, այն բացայայտ պատճառով, որ Չատիկը ըլլալով գերազանց Կիրակին, անոր յաջորդողը կ'ըլլայ սկիզբը տարւոյն բոլոր Կիրակիներուն: Հայաստանեայց Եկեղեցին, սակայն, ունի ուրիշ անուանակոչում մը այս Կիրակիին համար – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ – ինչ որ կը նշանակէ թէ այս Կիրակիին կը կրկնուին Չատկական ուրախութիւնները, ինչպէս նաեւ Չատկին տիրող հոգեւոր ու ընկերային մթնոլորտը:

Ըստ այս Կիրակիի շարականներու մեկնաբանութեան Նոր Կիրակին իր մէջ կը բովանդակէ մարդկային կեանքի վերանորոգութեան խորհուրդը: Բնութեան գեղեցկագոյն երեւոյթներէն է վերանորոգութիւնը: Ծառերն ու ծաղիկները անձրեւով ու արեւով յագեցնալէ յետոյ կ'արթնան, կը վերակենդանան: Արտաքին ազդակներ անհրաժեշտ են նաեւ մեր ներքին կեանքի վերանորոգութեան համար: Մեր գաղափարները, մեր համոզումները, մեր սէրը, մեր հաւատքը եւ այն ամէնը, որոնք չեն երեւիր եւ որոնք սակայն կը կազմեն մեր ներքին կեանքը, ներքին մարդը, կը կարօտին նոր ներարկումի, նոր աւիշի, նոր արեւի եւ անձրեւի:

Յիսուս է մարդկային բանական կեանքի գերագոյն վերանորոգիչը: Ան վերանորոգեց Հին Ուխտը, որ մաշած էր այլեւս եւ իր նպատակին չէր ծառայէր, այլ՝ Աստուծոյ նոր նպատակին անբաւարար էր: Յիսուս պէտք տեսաւ ՆՈՐ ՈՒՆՏ մը հաստատել նոր քարոզութեամբ եւ զայն կնքեց իր արիւնով: Նորոգեց հին պատուիրանները. նոր «զինին» նոր «տիկերու» մէջ լեցուց: Ամէն մարդ որ կը լսէր իր քարոզութիւնը կամ ականատես կ'ըլլար իր հօր գործերուն զարմացած կամ զայրացած կ'ըսէր. «Այս ի նչ նոր ուսուցում է» (Մր. 1.27): Յիսուս «նոր պատուիրան» տուաւ համայն մարդկութեան – սիրոյ պատուիրանը:

Առաքեալները, որոնք հոգեւին նորոգուած էին Քրիստոսի քարոզութեամբ, յարութեամբ ու մանաւանդ Սուրբ Հոգիի ներգործութեամբ, նոյն վերանորոգութիւնը կը թելադրեն բոլորին: Պօղոս Առաքեալ, որ արդարեւ Յիսուսի ուղղակի եւ անմիջական ազդեցութեամբ հոգեպէս եւ հիմնովին վերակենդանացաւ, իր նամակներուն մէջ հօր շեշտ կը դնէ այս լարին վրայ: «Չարութեան հին խմորը դուրս նետեցէք ձեզմէ, որպէսզի ամբողջութեամբ նոր եւ անխմոր զանգուած մը ըլլաք:» (Ա. Կր. 5.7): Կը պնդէ «Նոր մարդ, նոր արարած» ըլլալու անհրաժեշտութիւնը: «Ոչ թլփատուած ըլլալը եւ ոչ ալ անթլփատ փալը բարոյական մարզի մէջ արժէք մը կրնան ներկայացնել. էականը «նոր արարած» ըլլալն է (Գղ. 6.15): «Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով...» (Եփ. 4. 22-23): «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը եւ նոր մարդ եղէ՛ք ձեր Արարչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ» (Կղ. 3. 10): «Ուստի չենք թուլնար բնաւ: Նոյնիսկ եթէ մարմնապէս հետզհետէ կը քայքայուինք, բայց ներքնապէս կը նորոգուինք օրէ օր»: (Բ. Կր. 4.16):

Ու Նոր Կտակարանը իր վախճանին կը բերուի երբ Յայտնութեան Գրքի Տեսանողը կ'ըսէ. «Ապա տեսայ նոր երկինք եւ նոր երկիր մը, որովհետեւ նախկին երկինքն ու նախկին երկիրը անյայտացան... Ան որ գահին վրայ նստած էր, ըսաւ. ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ» (Յյտ. 21. 1,5):

Քրիստոնեական հիմնական այս գաղափարին յատկացուած է Նոր Կիրակին: Եւ օրուան շարականը, որ Ներսէս Լամբրոնացիի քերթողական բարձր ոճով գրչին արգասիքն է, կը յայտարարէ մարդկային ազգի նորոգութիւնը մեղքի եւ մահուան հնութենէ եւ կը հռչակէ այս Կիրակին իբրեւ Նաւակատիքը, այսինքն սկիզբը մեր փրկութեան:

Շարականին սկիզբը յիշուած «Նորոգեալ Կղզիք»ը քրիստոնեայ դարձած ազգերն են. նոյն նշանակութիւնը ունի յաջորդ տողի «Եկեղեցիք հեթանոսաց» բացատրութեան հետ: Շարականի երկրորդ տունով Սրբազան Բանաստեղծը խօսքը կ'ուղղէ «Հարսին», այսինքն Եկեղեցիին, ըսելով. «Ներսէն զարդարուէ ոսկեճամուկ զգեստներով պճնուած». այսինքն առաքիլութիւններով եւ սրբութեամբ նորոգուէ: Երրորդ տունի «Միոնի Որդիները» եկեղեցիի զաւակներն են: Շարականի այս համարով կը թելադրուի անոնց. «Ուրախացէք ի Քրիստոս թագաւորն» եւ ձեր հոգիներուն հնութենէն նորոգուած ըլլալու առիթով Նաւակատիք տօնեցէք եւ օրհնեցէք հրեշտակներու հետ «փառաց թագաւոր» Քրիստոսը:

Երանի անոնց, որոնց մէջ չէ մեռած եռանդը, հաւատքը եւ տրամադրութիւնը վերանորոգուելու: Անոնք պիտի նմանին հօգ արծիւին, որ ամէն տարի կը փոխէ իր փետուրները եւ խորհրդանշանը կը հանդիսանայ երկարակեցութեան եւ անսպառ ոյժի: Անոնք պիտի նմանին խնձորենիին որ ամէն տարի նոր ծաղիկներով եւ նոր տերեւներով կը պատմուճանուի, եւ ամէն տարի նոր պտուղներով կը բեռնաւորուի:

Տէր Աստուած



Աչքերովս տուած պարգեւներդ տեսնեմ:



Ականջներովս Քու խօսքերդ լսեմ:



Լեզուովս Քեզ փառաբանեմ եւ գոհութիւն յայտնեմ:

Ձեռքերովս Քեզի ծառայեմ:



Ոտքերովս Քեզի հետեւիմ:

Սիրեմ տկարին, Օգնեմ կարօտեալին,
Քրիստոնեայի վայել կեանք մը ապրիմ:

Շարական Նոր Կիրակիին

- Օրհնություն -

Նորոգեալ կրդիք առ Աստուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի, տուք ըզփառս Աստուծոյ.
Եւ պատմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարեա ի ներքոյ ի հանդերձս յոսկեհուորս պըսակեալ.
Քանզի ահա գայ առ քեզ Քրիստոս փառաց թագաւորն:

Բ'ախացեալ որդիք Սիոնի, ի թագաւորն Քրիստոս,
Տօնեցէք ցնծութեամբ գնաւակատիս հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ.
Եւ ընդ հրեշտակս օրհնեսցուք զՔրիստոս փառաց թագաւորն:

Սքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո, Քրիստոս,
Որ իջեր է ի Հօրէ, ի սէր հարսին եկեղեցւոյ զոր ընտրեցեր.
Որով փառաբանիս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյ քո հիմանցն,
Յորմէ Թովմաս հրաժարէր ոչ հաւատալ զքեզ տեսողացն.
Որում ցուցեր այսօր փափաքողին զվերըս մարմնոյդ:

Սարսելով Թովմայի շօշափեր զխոցուած տիգին եւ զբեւեռացն,
Եւ գոչելով վերաձայներ Տէր եւ Աստուած դաւանելով ըզյարուցեալդ.
Որով առաք զերանին որք ոչ տեսեալ հաւատացար:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Նորոգուած կրդիներ, Ազգերու եկեղեցիներ,
Լեռներու կատարներէն բարձրաձայն փառք տուէք Աստուծոյ.
Եւ պատմեցէք քաջութիւնը Յարուցեալին:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարուէ ներքնապէս ոսկեհուռ հանդերձներով պճնուած.
Քանզի կ'իջնէ քեզի Քրիստոս փառաց թագաւորն:

Ուրախացէք, Սիոնի որդիներ, Քրիստոս թագաւորով,
Տօնեցէք ցնծութեամբ նաւակատիքը մեր հոգիներուն.
Եւ օրհնեցէք հրեշտակաց հետ զՔրիստոս, փառաց թագաւորն:

Սքանչելի է, Քրիստոս, խորհուրդը տնօրէնութեանդ,
Որ իջար Հօրմէ ի սէր Հարսիդ եկեղեցւոյ,
Որմէ փառք կը ստանաս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյդ հիմքերուն,
Իսկ բացական, Թովմաս, չէր հաւատար տեսնողներուն.
Որուն սակայն ցոյց տուիր այսօր վերքերը մարմնոյդ:

Սարսափահար Թովմաս կը շօշափեր հետքը վերքիդ եւ գամերուն,
Ու բարձրաձայն յարուցեալդ Տէր եւ Աստուած կը դաւանէր:
Որով մենք ալ երանուեցանք, զի չտեսած Քեզ հաւատացինք:



Սրբուհի Աստուածածնի աւետումը

Այսպէս կը կոչուի սբ. Մարիամ Աստուածածնին Գաբրիէլ հրեշտակի կողմէ աւետիս բերելու իրադարձութիւնը: Հրեշտակը, յայտնուելով Կոյս Մարիամին, ըսաւ անոր. «Ուրախացի՛ր, շնորհալի կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է: Մի՛ վախնար, Մարիամ, որովհետեւ Աստուծոյ շնորհքին արժանացար: Ահա պիտի յղանաս եւ զաւակ մը ծնիս, որ Յիսուս պիտի կոչես: Անիկա մեծ պիտի ըլլայ եւ Բարձեալին որդին պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթի գահը, եւ անիկա Յակոբի սերունդներուն վրայ յաւիտեանս պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ: (Ղուկ. 1.28-33):

Մարիամ մեծ զարմանքով լսեց այս խօսքերը, որոնք անոր առջեւ կը բանային Աստուծոյ Որդիին մարդեղութեան խորհուրդը: Անոր խոնարհ սիրտը չէր հաւատար, որ Աստուծոյ Որդին պէտք է դառնայ եւ իր որդին, որ իրմէ պէտք է ծնի աշխարհի Փրկիչը: Տարակուսելով՝ ան հարցուց հրեշտակին.

«Ատիկա ի՞նչպէս կրնայ պատահիլ երբ ամուսնացած չեմ»: Հրեշտակը պատասխանեց. «Սուրբ Հոգին քեզի պիտի գայ եւ Բարձեալին զօրութիւնը քու վրադ պիտի հանգչի. ուստի ծնելիք զաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի» : (Ղուկ. 1.34-35):

Մարիամը, մեծ հաւատքով և ամբողջովին յանձնուելով Աստուծոյ կամքին, խոնարհաբար բացագանչեց. «Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ» (Ղուկ. 1.38):

Այս խօսքերով Կոյս Մարիամը ողջ մարդկութեան անունով համաձայնութիւն տուաւ դառնալու միջոց Քրիստոսի մարդեղութեան:

Այդ պահէն սկսաւ իրականանալ հրեշտակի խօսքերը: Սուրբ Կոյսի պատասխանին և համաձայնութեան անմիջապէս հետեւեցաւ անոր Սուրբ Հոգիով յղանալը Յիսուսով, որ սկիզբը եղաւ մեր փրկագործութեան:

Այս սքանչելի իրադարձութեան յիշատակը այժմ Հայ Եկեղեցին կը կատարէ Ապրիլի 7-ին: Ըստ աւանդութեան Գաբրիէլի աւետումը տեղի ունեցած է Չորեքշաբթի օրը: Այս պատճառով տարուայ բոլոր Չորեքշաբթի օրերը նուիրուած են Աստուածածնի աւետման եւ Քրիստոսի մարդեղութեան:

Գիտէի՞ր թէ

Հայաստանի մէջ մայրերու տօնը Ապրիլ 7-ին կը տօնեն:

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՏՕՆԵՐ

Աստուածամօր տօներու մէջ ժամանակագրական կարգով առաջինն է Սուրբ Կոյսի յղացումը Աննայէն (Դեկտեմբերի 9), ապա՝ անոր ծնունդը (Մեպտեմբերի 8) և երեքամեայ Ընծայումը Տաճարին (Նոյեմբերի 21): Աւետումը, որ տոմարական նկատառումներով առանձնացուած է Աստուածայայտնութեան տօնախմբական շրջանին, ներկայիս Հայ Եկեղեցին կը յիշատակէ Ապրիլի 7-ին, իսկ Վերափոխումը՝ օգոստոսի 15-ի մօտ կիրակի օրը՝ իրեն յաջորդող 8 տօնական օրերու հետ կազմելով իննօրեայ տօնախմբական շրջան: Աստուածամօր նուիրուած են նաեւ անոր գօտիին եւ տուփին յայտնաբերման յիշատակները, որոնցմէ առաջինը կը տօնուի Վերափոխման իննօրեակին յաջորդող առաջին Կիրակիին, իսկ երկրորդը՝ Հոգեգալուստին յաջորդող 5-րդ կիրակի օրը:

Կարմիր Կիրակի

Ամեն տարի, Սուրբ Զատիկի չորրորդ Կիրակին (Ս. Զատիկէն 21 օրեր ետք) Հայաստանեայց առաքելական եկեղեցին կը նշէ Կարմիր Կիրակին: Կարմիրը Քրիստոսի եկեղեցւոյ և հաւատքի համար մարտիրոսացած նահատակներու արեան խորհրդանիշն է:

Կարմիր Կիրակին կը կազմէ գատկական տօնական հանդիսութիւններու շարունակութիւնը: Կը բնութագրուի ծիսական ուտեստով (կարմիր, կանաչ հաւկիթներ, եւայլն), ուխտագնացութեամբ, մատաղով:

Հաւանաբար սա եւս բնութեան հետ կապ ունեցող բան մըն է, քանի որ Կանաչ և Կարմիր Կիրակիներուն եկեղեցւոյ մէջ սովորութիւն էր այդ գոյները գործածել, ըսենք՝ եկեղեցւոյ վարագոյրը, քահանայի, դպիրներու ու սարկաւագներու զգեստները, Ս. Սեդանի սփռոցները, զանազան այլ իրեր:

Հետաքրքիր է, որ ժողովրդական լեզուով կանաչ-կարմիր կը նշանակէ նաեւ ծիածանի գօտի: Սահակ վարդապետ Ամատունին իր «Հայոց բառ ու բան» բառարանին մէջ կը գրէ. «Աղեղնակ, Անեղնակ, Կանաչ ու Կարմիր Աղեղն, ծիածան: Ծիածանի գօտին՝ որ ամպ ու անձրև օրերում կամարածն երևում է երկնքի երեսին: Ծիածանը, որին կոչում են կանաչ ու կարմիր՝ Աստծոյ գօտին է» (Արտակ Արք. Մանուկեան, «Հայ եկեղեցւոյ տօները», էջ 154):

«Հին ժամանակներում, պսակի արարողութեան ընթացքում կանաչ-կարմիր ժապաւեններ էին կապում փեսայի և հարսի վրա, իբրև խորհրդանիշ պտղաբերության: Կանաչ-կարմիր կապել նշանակում է իրար հետ պսակուել: Կարմիր կանչել՝ հարսանիքի ժամանակ փեսայի համար դրամ հաւաքել, կարմրականչ անել՝ հիւրասիրութեան հրաւեր կատարել», - կը շարունակէ հեղինակը:

Կարմիր գոյնը ընդհանրապէս պայքարի նշանն է, խորհրդանիշը կեանքի, կեանքի համար պայքարի ու յաղթանակի: Յաղթանակ քրիստոնէական ոգիի, բայց յատկապէս յաղթանակ քրիստոնէական ըմբռնումի: Պայքար իր տեղը, դիրքը և հաւասարակշռութիւնը պահելու համար: Պայքար՝ ունենալու համար այն անհրաժեշտ զօրութիւնն ու ոյժը, որով քրիստոնէան կը կարողանայ «գամենայն նետս մուխս չարին շիջուցանել», այսինքն՝ պայքարիլ այն ապականիչ ուժերուն դէմ, որոնք կը սպառնան մեր հոգեւոր կեանքը խաթարել, տկարացնել կամ սպաննել:

Քրիստոնէայ ըլլալու համար եռանդ և մարտական ազնիւ ոգի պէտք է ունենալ. ատիկա պայքարելու տրամադրութենէն զուրկ մարդու գործ չէ: Հարկաւոր է կենդանի ու ապրող հաւատք, բուն ներքին պայքար՝ հին կեանքի կուտակուած մոլութիւններէն ազատուելու համար:

Կարմիր Կիրակին քրիստոնէական քաջութեան յիշեցման օր է, իսկ քաջութիւնը հիմնական կէտն է քրիստոնէական առաքինութիւններու մէջ: Ուրեմս՝ Կարմիր Կիրակին յիշեցում է, որ քրիստոնէական կեանքը պայքար է վատ և տգեղ երևոյթներու դէմ:

Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի

Կանաչ Կիրակի անունը կը տրուի Զատկուայ երրորդ Կիրակիին, որ Զատիկէն 14 օր ետք կը հանդիպի եւ Զատկուան հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատուր բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան, ուր Քրիստոս իր վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր առաքեալները սովորութիւն ըրին հաւաքուիլ Քրիստոսի Համբարձումէն ետք: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողովուէին նոր հաւատացեալները: Հայոց եկեղեցւոյ յատուկ է եկեղեցւոյ անունով տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն եղաւ եւ եկեղեցւոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

ՅԻՇԱՏԱԿ ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ծաղկազարդը նախորդող Շաբաթ օրը, ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Տօնացոյցին յիշատակի տօնն է Ղազարոսի յարութեան:

Շատեր կը կարծեն թէ մեր Տէրը Քրիստոս այս օրը Ղազարոսին յարութիւն տուաւ, բայց այդպէս չէ (Ղազարոսի յարութեան մասին կարդալ Յհ 11.46): Մեր Տէրը Ղազարոսին յարութիւն տալէ ետք, տակաւին իր առաքելութիւնը շարունակեց, ինչպէս կը յուշէ մեզի Մաղաքիա Արք. Օրմանեանը իր «Ծիսական Բառարանին» մէջ, ըսելով թէ Ղազարոսի յարութիւն տալէ ետք Եփրայիմ շրջանը քաշուած է (տե՛ս Յհ 53-54): Իսկ նախքան Երուսաղէմ իր յաղթական մուտքը, հանդիպեցաւ Բէթանիա, այնտեղ ուր Ղազարոսը կ'ապրէր, ուր եւ Մարիամ մեր Տիրոջ ոտքերը իւղով օծեց՝ ի նշան իր թաղման (կարդա՛լ Յհ 12.1-8):

Ղազարոսի յարութեան յիշատակութեամբ մենք կը վերահաստատենք մեր մէջ մեր իսկ յարութեան յոյսը, քաջ գիտնալով որ Յիսուս մեզ եւս պիտի յարուցանէ, մանաւանդ երբ Անոր կամքին համաձայն ապրած ըլլանք: Տակաւին, այս յիշատակութիւնը առիթ մըն է իւրաքաչիւր քրիստոնէայ հաւատացեալին համար, զգաստանալու եւ քրիստոնավայել կեանք ապրելու, պատրաստ ըլլալով յարութեան:

Ի վերջոյ, Ստեփանոս Քահանայ Մանդինեանցը, իր՝ «Աստուածաշնորհին Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ» գիրքին մէջ, պատասխանելով այն հարցին, թէ ի՞նչ կը սորվեցնէ մեզի Ղազարոս Յարութեան Շաբաթը, կ'ըսէ. «Ծաղկազարդին նախորդող Շաբաթ օրը, եկեղեցին կը կատարէ Ղազարոսի յարութեան յիշատակը, երբ Յիսուս չորսօրեայ մեռելին յարութիւն տուաւ: Այս յիշատակութիւնը մեզի կը սորվեցնէ Քրիստոսի աստուածային զօրութիւնը եւ յարութեան յոյս կու տայ մեզի: Նաեւ, անոնք որոնք մեղքի մէջ մեռած էին, ցոյց կու տայ, թէ ժամանակը հասած է արդէն այդ մեռելութենէն յարութիւն առնելու»:


ԼՈՒՐԵՐ ԵՆ ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԵՆ

Կիրակի՝ 5 Մարտ 2023-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Բ. շաբթուան, եւ Անատակի Կիրակիին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ:

Կիրակի՝ 12 Մարտ 2023-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Գ. շաբթուան, եւ Դ. Կիրակիին՝ Տնտեսի Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Յովհաննէս երուսաղէմացիի, Ս. Յովհաննէս Օձնեցիի, Ս. Յովհաննէս Որոտնեցիի, եւ Ս. Գրիգոր Տաթևացիի: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ:

Կիրակի՝ 19 Մարտ 2023-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Դ. շաբթուան, եւ Ե. Կիրակիին՝ Դատաւորի Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Քառասուն Մանուկներուն: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Մանկապարտեզի եւ Նախակրթարանի դասարանները ունեցան նաեւ երաժշտութեան պահ:

Կիրակի՝ 26 Մարտ 2023-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ Մեծ Պահքի Ե. շաբթուան, եւ Զ. Կիրակիին՝ Գալստեան Կիրակիին, ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապին: Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Աշակերտները շարունակեցին իրենց շաբաթական պահերը:







Աւագ Երկուշաբթին նուիրուած է աշխարհի՝ երկնքի և երկրի արարչագործութեան: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին աւետարանական ընթերցումները կը յիշատակեն «Անիծուած թզենիին» պատմութիւնը, երբ Յիսուս, Բեթանիայէն Երուսաղէմ վերադարձին, անէծքով չորցուց անպտուղ թզենին՝ ըսելով. «Եւ աղօթած ատեն ինչ որ հաւատալով խնդրէք՝ պիտի ստանաք» (Մատթ., 21.22): Յիսուս անիծելով տերևներով զարդարուած, բայց անպտուղ թզենին՝ փարիսեցիներուն կ'ակնարկէր, ովքեր արտաքին բարեպաշտութեամբ զարդարուած էին, սակայն չունէին այդ բարեպաշտութեան հոգևոր պտուղը՝ բարի գործերը և ողորմածութիւնը:

Պտուղը այլաբանօրէն կը խորհրդանշէ մարդկային բարի գործերն ու առաքինութիւնները, որոնցմէ զուրկ մարդը կը պատժուի այս թզենիի օրինակով: Ինչպէս կ'ըսէ Ս. Յակոբոս առաքեալը՝ «Առանց գործերու հաւատքը անօգուտ է» (Յակոբոս, 2.20):

Աւագ Երկուշաբթի օրը չորցած թզենիի յիշատակն է: Քրիստոս Իր գործունէութեամբ բոլորին կը բուժէր և կեանք կը պարգեւէր, սակայն միայն մէկ անգամ ան Իր զօրութիւնը գործածեց չորցնելու համար թզենին՝ ցոյց տալու համար, որ Իր խօսքը կենդանաբար է, Ինքն ալ կը կենդանացնէ, բայց նաև կը դատէ: Քրիստոս չորցուց կանաչ թզենին և բուժեց չորցած ձեռքը: Քանի որ կը մօտենային Իր չարչարանքները, Քրիստոս թզենին չորցուց, որպէսզի առաքեալները չմտածէին, թէ Իր ուժերու թուլութեան պատճառով էր, որ չարչարանքներու մատնուեցաւ: Քրիստոս թզենին չորցուց նաև ցոյց տալու համար, որ Իր գալուստով այլևս պէտք չեն թզենիի տերևները, որոնցմով Ադամ կը ծածկէր իր մերկութիւնը, և որոնք կը ծառայէին իբրև ամօթի և խայտառակութեան ծածկոց: Այս օրուան մէջ Յիսուս նաեւ մաքրագործեց տաճարը:

Աւագ Երեքշաբթին ներքին ձեւով կապուած է նախորդ օրուան հետ. ան կ'ակնարկէ որ մեր առաքինի գործերու պտուղներով հոգեպէս պէտք է պատրաստ ըլլանք Քրիստոսի երկրորդ գալստեան, այլապէս կը չորնանք թզենիին պէս և երկնքի արքայութենէն դուրս կը մնանք հինգ յիմար կոյսերու նման: Օրուայ աւետարանական ընթերցումը կը պատմէ «Տասը կոյսերու» առակը (Մատթ., 25.1-13): Այս առակը հինգ իմաստուն և հինգ յիմար կոյսերու պատմութեամբ կը պատգամէ պատրաստ ըլլալ Տիրոջ գալստեան:

Աւագ Երեքշաբթի, երեկոյեան ժամերգութեան ընթացքին եկեղեցւոյ ատենան կու գան տասը կոյսեր: Անոնցմէ հինգը, ձեռքերնին պահած ունենալով վառող մոմեր, կը խորհրդանշեն իմաստուն կոյսերը, իսկ միւս հինգը՝ մարած մոմերով՝ յիմար կոյսերը:

Տասը կոյսերուն առակը



Զատիկը նախորդող Աւագ Երեքշաբթի օրը՝ Յիսուս իր աշակերտներուն պատմեց Տասը կոյսերու առակը, որ կը կարդանք Մատթեոս 25.1-13 ին մէջ:

Այն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի հետեւեալին.-

Տասը կոյսեր կային, որոնք իրենց լապտերները

առած՝ դիմաւորելու ելան փեսան: Անոնցմէ հինգը յիմար էին, իսկ միւս հինգը իմաստուն: Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ պահեստի ձեթ չառին, մինչդեռ իմաստունները իրենց լապտերներուն հետ սրուակով ձեթ առին: Եւ երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան:

Կէս գիշերին կանչ մը լսուեցաւ. «Ահա փեսան կու գայ, գայն դիմաւորելու ելէք»: Կոյսերը արթնցան եւ սկսան իրենց լապտերները կարգի դնել: Յիմար կոյսերը իմաստուններուն ըսին. «Ձեր ձեթէն քիչ մը մեզի տուէք, որովհետեւ մեր լապտերները ահա կը մարին»: Իմաստուն կոյսերը պատասխանեցին. «Ո՛չ, որովհետեւ կրնայ ըլլալ որ մեզի եւ ձեր չքաւէ. աւելի լաւ կ'ըլլայ որ երթաք խանութպաններուն եւ ձեզի համար ձեթ գնէք»:

Երբ անոնք ձեթ գնելու գացին, փեսան եկաւ, եւ պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ: Քիչ ետք եկան միւս կոյսերը եւ ըսին. «Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բաց մեզի»: Փեսան պատասխանեց. «Իսկապէս որ չեմ ճանչնար ձեզ»:

Ապա Յիսուս եզրակացուց.

- Ուրեմն՝ արթո՛ւն մնացէք, որովհետեւ չէք գիտեր Մարդու Որդիին գալուն ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը:

Աւագ Չորեքշաբթի օրը կը յիշատակուի Բեթանիոյ մէջ կնոջ կողմէ Յիսուս Քրիստոսի օծումը և Տիրոջ մատնութիւնը: Մեղաւոր կինը նարդոսի ազնիւ ու թանկարժէք իւղով կ'օծէ Յիսուսը: Այս մասին աւետարանիչները զիրար լրացնող տեղեկութիւններ կը հաղորդեն: Աշակերտները կը բարկանան, քանի որ այդ իւղը վաճառելով կարելի էր շատ աղքատներու ողորմութիւն տալ: Աշակերտներու այս տրտունջին Յիսուս կը պատասխանէ. «Աղքատները միշտ ձեզի հետ ունիք եւ երբ որ ուզէք՝ կրնաք անոնց բարիք գործել, բայց զիս չունիք ձեզի հետ:» Կնոջ կողմէ Յիսուսի օծումը կը կանխանշէ անոր թաղուիլը: «Այս կինը ի՛նչ որ կրնար՝ ըրաւ. իմ մարմինս սկիզբէն օծեց թաղումիս որպէս նշան,» կ'ըսէ Քրիստոս:


Աւագ Չորեքշաբթի օրուայ աւետարանական ընթերցումը կը յորդորէ չարաշահել Աստուծոյ ունեցած սէրն ու վստահութիւնը և, յիշելով մարդկութեան համար անոր կրած չարչարանքներն ու մահը, չշեղիլ ճշմարիտ ճանապարհէն, երկրպագել ու փառաւորել զԱստուած:



Աւետարան, 1038 թ. Զրեշտակի յայտնութիւնը իւղաբեր կանանց

«Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք:
Հոս չէ՛ ան. յարութի՛ւն առաւ:»

Ղուկաս 24.5-6



ԱԼԱԳ ՀԻՆՂԶԱՐԹԻ

Խորհրդաւոր ընթրիքի յիշատակի օրն է: Ալագ Հինգշաբթի առաւօտեան բոլոր եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Ս. Պատարագ՝ ի յիշատակ Խորհրդաւոր ընթրիքի ժամանակ Քրիստոսի կողմէ Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատման:

Վերջին ընթրիքէն ետք Յիսուս ջուրը լեցուց կոնքի մէջ, ծունկի եկաւ իր աշակերտներուն առջև և խոնարհաբար լուաց անոնց ոտքերը՝ հեգութեան և խոնարհութեան իբր օրինակ ծառայելով:

Այս օրը եկեղեցիներու մէջ կատարուող ոտնլուայի արարողութենէն ետք հաւատացեալներուն կը բաժնուի օրհնուած իւղ, զոր հաւատացեալները կը գործածեն հիմնականին մէջ հիւանդութիւններու պարագային կամ կը խառնեն տան մէջ ունեցած իւղին:

Ալագ Հինգշաբթի օրը կը յիշատակուի Քրիստոսի կողմէ Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատումը: Քրիստոս վերջին ընթրիքի ընթացքին հացն ու գինին ճաշակելու տուաւ իր աշակերտներուն՝ ըսելով որ հացը Իր մարմինն է, իսկ գինին՝ Իր արիւնը, որ կը հեղու մարդոց մեղքերու քաւութեան համար: Մերժելի և անընդունելի են աղանդաւորական այն բոլոր տեսակէտները, որոնց համաձայն հացն ու գինին պարզապէս Քրիստոսի մարմնի արեան խորհրդանիշ են: Այսպիսի պնդումները կը հակասեն Քրիստոսի բառերուն: Ան հաղորդութեան համար երբեք չօգտագործեց խորհրդանիշ բառը: Քրիստոս նաև մէկ այլ տեղ ըսաւ, որ ով որ Իր մարմինն ու արիւնը

չճաշակէ, երբեք յաւիտենական կեանք պիտի չունենայ:

Ալագ Հինգշաբթի երեկոյեան կը կատարուի ոտնլուայի արարողութիւնը: Խորանի վրայ բարձրաստիճան հոգևորականը, զոգնոց կը կապէ եւ կը լուայ ու իւղով կ'օծէ 12 հոգիի ոտքերը: Այս՝ ան կ'ընէ Քրիստոսի արարքի նմանողութեամբ, երբ Քրիստոս լուաց իր 12 աշակերտներու ոտքերը՝ խոնարհութեան նշան ցոյց տալով ու ըսաւ թէ՝ *«Ես ձեզի օրհնակ մը տուի, որպէսզի դուք ալ իրարու ընէք այն ինչ որ ես ձեզի ըրի»* Յովհաննէս 13.15:



ԱԼԱԳ ՇԱՐԲԹ

օրը կը յիշատակուի Դժոխքի աւերումը եւ տեղի կ'ունենայ Ճրագալոյցի պատարագը: Այդ երեկոյ, եկեղեցւոյ վառած մոմերէն կը վառուին բազմաթիւ մոմեր եւ ճրագներ եւ հաւատացեալները այդ մոմին լոյսը կը բերեն իրենց տունները իբրեւ խորհրդանիշ Յիսուսի յարութեան ուրախ աւետիսին: Այդ երեկոյ վերջ կը գտնէ նաեւ Մեծ Պահքը:



Աւագ Ուրբաթ Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքներու եւ խաչելութեան յիշատակի օրն է։ Քանի որ, ըստ եկեղեցական օրենքի, երեկոյեան ժամերգութենէն ետք օրը կը փոխուի, ապա չարչարանքներուն նուիրուած արարողութիւնը կը կատարուի Հինգշաբթի երեկոյեան։ Արարողութեան ընթացքին կ'ընթերցուին համապատասխան Աւետարաններ, իսկ խորանի վրայ վառող 12 մոմերը կը խորհրդանշեն առաքեալները։ Երբ ընթերցուի առաքեալներու՝ Քրիստոսին լքելու մասին հատուածները, վառող մոմերը հերթով կը մարեն։ Յուդային խորհրդանշող մոմը սև գոյն կ'ըլլայ։ Աւագ Ուրբաթ օրը ծաղիկներէ եւ մշտադալար ծառերու ճիւղերէ կը պատրաստուի Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը և երեկոյեան ժամերգութիւնէն ետք, հոգևորականները, հաւաքուելով գերեզմանի մօտ, կ'երգեն «Խաչի Քո Քրիստոս» օրհներգը, այնուհետև բոլորը կը համբուրեն գերեզմանին վրայ դրուած խաչն ու Աւետարանը։

Մարդիկ սովորաբար կը վախճան մահէն, սակայն Քրիստոսի մահով և յարութեամբ արդէն մահը մեզի համար սարսափելի չէ, որովհետև մենք գիտենք յարութեան մասին։ Այդ իսկ պատճառով ծաղկահիւս այս գերեզմանը ոչ թէ մահ, այլ կեանք, յաւիտենութիւն ու երանութիւն կ'աւետէ։

Խաւարման արարողութեան ժամանակ խորանին վրայ կը վառին տասներկու հաւասարաչափ մոմեր և մէկ հատ մեծ՝ անոնց միջև։ «Խաւարման» ընթացքին՝ աւետարաններէն կը կարդացուին եօթ հատուածներ, որոնք կը բովանդակեն 1. Յիսուսի՝ Գեթսեմանիի պարտեզին մէջ աղօթելը, 2. Յուդայի մատնելը, 3. Յիսուսի՝ ամբօխի ձեռքը յանձնուիլը, 4. Աննայի և Կայիափայի առաջ տարուիլը, 5. ապտակուիլը, 6. անարգուիլն ու 7. Պետրոսի երեք անգամ Յիսուսը ուրանալն ու զղջալը։ Աւետարանական ընթերցումները կ'ընդմիջուին սաղմոսներու ընթերցանութեամբ և Ս. Ներսէս Շնորհալիի հեղինակած շարականներով։ Ամէն աւետարանական ընթերցումէ ետք, կը մարեն տասներկու մոմերէն երկուքը՝ իւրաքանչիւր կողմէն մէկական, վերջաւորութեան կը մնայ միայն մէջտեղի մեծ մոմը։ Եւս մէկ շարականէն ետք կը մարեն եկեղեցւոյ բոլոր լոյսերը, և կ'երգուի «Փառք ի բարձունս»ը, զոր առաջին անգամ ըսեր են հովիւները. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղուկ. 2.14)։ Այս երգի վերջին խօսքերէն «Ծագեալ»ի ժամանակ դարձեալ կը վառին լոյսերը։ Մոմերը մարելը կը խորհրդանշէ աշակերտներու ձգելն ու փախչիլը, իսկ մէջտեղի մոմը կը խորհրդանշէ Քրիստոսը, որ մնացեր է միայնակ։

Ուրբաթ օրը տեղի կ'ունենայ կարգ խաչելութեան, իսկ երեկոյեան ժամերգութենէն յետոյ նախատօնակի արարողութեան ընթացքին՝ կը կատարուի Թաղման կարգը, երբ Յիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ պատրաստուած ծաղիկներէ և ծառի ճիւղերէ կը պատի եկեղեցւոյ շուրջ ի տես հաւատաւոր ժողովուրդին։

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Եմմաուսի ճամբուն վրայ

Ամբողջացո՛ւ ւր քստ Ղուկաս 24.13-17 համարներուն:

Ճանչնար, գիւղ, տասնըմէկ, պատահած, խօսակցէին,
գիշերելու, Յիսուս, երթալ, ծածկուած, հացը, կտրեց, երկուքը

Նոյն օրը աշակերտներէն ----- Եմմաուս անունով -----
մը կ'երթային, որ Երուսաղէմէն շուրջ ----- քիլոմէթր հեռու է:
Անոնք իրարու հետ կը խօսէին ----- անցուդարձերուն մասին:
Մինչ իրարու հետ կը ----- ու կը վիճէին, ----- անձամբ
մօտեցաւ անոնց եւ սկսան միասին -----: Անոնց աչքերը այնպէս
մը ----- էին, որ չէին ----- զայն: ...

Յիսուս անոնց հետ տուն մտաւ ----- համար: Երբ անոնց
հետ սեղան բազմեցաւ, առաւ -----, օրհնեց, ----- եւ անոնց
տուաւ: Անմիջապէս անոնց աչքերը բացուեցան եւ ճանչցան զինք,
բայց ինք անոնց աչքերէն անյայտացաւ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Սուրբ Յարութեան
Կիրակիին յաջորդող Կիրակի օրը
(Երկու պատասխան):

ա. Նոր Կիրակի
բ. Կրկնազատիկ
գ. Կանաչ Կիրակի
դ. Կարմիր Կիրակի

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Աստուածածնի աւետումը:

ա. Ապրիլ 5
բ. Ապրիլ 7
գ. Մարտ 28
դ. Ապրիլ 8

3.- Ամբողջացո՞ւր ըստ Սաղմոս 23
(ԻԲ) 1-ին.

Տերն է -----, ուստի ոեւէ
բանի ----- պիտի չմսամ:

4.- Յիսուս իր ձերբակալութենէն
առաջ ի՞նչ կ'ընէր:

ա. կ'ուտէր
բ. կը խմէր
գ. կ'աշխատէր
դ. կ'աղօթէր

5.- Այս տարի ե՞րբ էր Ծաղկազարդը.
Ապրիլ -- ին:

6.- Ո՞վ գլորեց Յիսուսի գերեզմանը
գոցած մեծ քարը:

ա. Կիները
բ. Աշակերտները

գ. Աստուծոյ հրեշտակը
դ. Պահակ զինուորները

7.- Ոտնւուման շաբթուայ ո՞ր օրը
տեղի ունեցաւ:

ա. Երկուշաբթի
բ. Երեքշաբթի
գ. Չորեքշաբթի
դ. Հինգշաբթի

8.- Վերջին Ընթրիքը շաբթուայ ո՞ր
օրը տեղի ունեցաւ:

ա. Երկուշաբթի
բ. Շաբաթ
գ. Չորեքշաբթի
դ. Հինգշաբթի

9.- Յիսուսի խաչելութիւնը
շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

ա. Ուրբաթ
բ. Երեքշաբթի
գ. Չորեքշաբթի
դ. Հինգշաբթի

10.- Կիրակի օրը Յիսուսի
յարութենէն առաջ ի՞նչ կը կոչուէր:

ա. Մէկշաբթի
բ. Շաբաթ
գ. Կիրակի
դ. Արեւի օր

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատիկին
յաջորդող 50 օրերու շրջանը.

Յ-----

2.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր
ետք համբարձաւ:

ա. 7

բ. 21

գ. 40

դ. 50

3.- Տուր Նոր Կիրակիին հոմանիշ մը.

ա. Կանաչ Կիրակի

բ. Կապոյտ Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կրկնազատիկ

4.- Տուր Աշխարհամատրան
Կիրակիին հոմանիշ մը:

ա. Կանաչ Կիրակի

բ. Կապոյտ Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կրկնազատիկ

5.- Ծաղկազարդին նախորդող
Շաբաթ օրը որո՞ւ Յիշատակը
կ'ոգեկոչենք:.

----- Յարութեան

6.- Այս տարի Հայոց
Ցեղասպանութեան քանի՞ երորդ
տարեդարձն է:

7.- Վերջին ընթրիքը շաբթուան ո՞ր
օրը տեղի ունեցաւ:

ա. Աւագ Չորեքշաբթի

բ. Աւագ Հինգշաբթի

գ. Աւագ Ուրբաթ

դ. Աւագ Շաբաթ

8.- «Տասը Կուսանաց»-ը շաբթուամ
ն՞ր օրը կ'ըլլայ:

ա. Աւագ Երեքշաբթի

բ. Աւագ Հինգշաբթի

գ. Աւագ Ուրբաթ

դ. Աւագ Շաբաթ

9.- Յիսուս ո՞ր օրը խաչուեցաւ:

ա. Աւագ Չորեքշաբթի

բ. Աւագ Հինգշաբթի

գ. Աւագ Ուրբաթ

դ. Աւագ Շաբաթ

10.- Յիսուս իր յարութենէն ետք
քանի՞ աշակերտներու հանդիպեցաւ
Եմմաուսի ճամբուն վրայ:

ա. 2

բ. 4

գ. 8

դ. 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ամբողջացո՛ւր Յովհաննէս 11.25.

Ես եմ ----- եւ -----:

Ան որ ինձի կը -----,

Թէպէտեւ ----- պիտի -----:

2.- Զատիկին, ողջոյն տուողը կ'ըսէ.

- Քրիստոս ----- ի -----

եւ ստացողը կը պատասխանէ

----- է ----- Քրիստոսի:

3.- Կիրակիներու ո՞ր շաբթը շիտակն է.

ա. Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր

բ. Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր, Ս. Զատիկ

գ. Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կարմիր, Կանաչ

դ. Կրկնազատիկ, Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կանաչ:

4.- Ի՞նչ կը յիշատակենք
Ծաղկազարդին նախորդող Շաբաթ
օրը.

Ղ-----ը:

5.- Յուդա ե՞րբ համաձայնեցաւ
մատնել Յիսուսը:

ա. Աւագ Երկուշաբթի

բ. Աւագ Երեքշաբթի

գ. Աւագ Չորեքշաբթի

դ. Աւագ Հինգշաբթի:

6.- Խաւարման գիշերուայ ընթացքին
քանի՞ հատուածներ կը կարդացուին
Աւետարանէն.

ա. 6 կամ 12

բ. 3 կամ 13

գ. 7

դ. 13:

7.- Որո՞նք առաջին անգամ գտան
Յիսուսի պարապ գերեզմանը.

Մարիամ ----- եւ -----
Մարիամը:

8.- Յիսուսի ո՞ր երկու աշակերտները
միւսներէն առաջ վազեցին դէպի
պարապ Գերեզմանը (գրէ շիտակ
շաբթով).

Յ----- եւ -----:

9.- Յուդա ի՞նչ ստացաւ Յիսուսը
մատնելուն համար.

ա. 20 արծաթ դահեկան

բ. 30 արծաթ դահեկան

գ. 20 ոսկի դահեկան

դ. 30 ոսկի դահեկան:

10.- Յուդան ինչպէ՞ս մատնեց
Յիսուսը.


-----:

Ինչպե՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի նահատակներուն
անմահ յիշատակը

Ապրիլ 24, 1915 - 2023

Ոգեկոչենք Մեծ Եղեռնի նահատակներուն անմահ յիշատակը նաեւ՝

- . Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- . Վառ պահելով հայաստանեայց եկեղեցւոյ տօներն ու ազգային
աւանդութիւնները,
- . Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր Հայանուագ շարականներն ու
երգերը,
- . Ամուր կառչած փալով մեր հայավայել բարի բարքերուն ու
սովորութիւններուն
- . Կարդալով ու կեանքի վերածելով մեր հայագրեալ Աստուածաշունչը
եւ մանաւանդ ՄԻԲԵԼՈՎ Հայր ամբողջ տարուան ընթացքին:



«Պիտի հանեմ
ձեզ ձեր
գերեզմաններէն.
կենդանութեան
շունչ պիտի
տամ, իմ հոգիս
պիտի տամ ձեզի,
եւ ձեզի ձեր
երկիրը պիտի
վերադարձնեմ»:
Եզեկիէլ 37.14